ԹԵՄԱ 3 ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

§ 37. ՀԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1

Իշխանը պետությունը կառավարում էր իր թիկնազորի՝ ***դրուժինայի*** օգնությամբ: Ամռանը նա արշավանքներ էր կատարում նորանոր ցեղեր հպատակեցնելու համար, իսկ ձմռանը շրջում էր պետության տարածքով, հավաքում հարկերը: ***Հարկի հավաքումը կոչվում էր պոլյուդյե:*** Հարկի չափը որոշակի չէր, իշխանը հավաքում էր ըստ ցանկության:

945 թ. Իշխան Իգորը փորձեց դրևլյաններից կրկնակի հարկ հավաքել: Դրևլյանները ապստամբեցին և սպանեցին Իգորին: Իգորի կինը՝ իշխանուհի Օլգան, դաժանորեն ճնշեց ապստամբությունը, սակայն նոր ապստամբությունների տեղիք չտալու համար ստիպված եղավ հարկի կայուն չափ սահմանել:

Իշխան Իգոր, կառավարել է 912-945 թթ.



Իշխանուհի Օլգա, իշխան Իգորի կինը, կառավարել է 945-962 թթ.

«Ռուսկայա պրավդա»-ի օրենքները պաշտպանում էին մասնավոր սեփականությունը: Տոհմական կարգից պահպանվող արյան վրեժի սովորույթը «Ռուսկայա պրավդա»-ում փոխարինվեց դրամական տուգանքով: Եթե նախկինում սպանության համար վրեժ էին լուծում սպանվածի հարազատները՝ սպանելով մարդասպանի հարազատներին, այժմ սպանողը պետք է վճարեր դրամական տուգանք:

«Ռուսկայա պրավդա»-ի ստեղծումը վկայում էր հասարակության առաջընթացի մասին: Պետության ողջ տարածքում մտցվեցին միատեսակ օրենքներ և սահմանվեցին միատեսակ պատիժներ հանցանքների համար: Ամրապնդվում էր իշխանի և ազնվա-տոհմիկների իշխանությունը:

Հատված «Ռուսկայա պրավդա»-ից

Եթե դիտավորյալ սպանեն օգնիչանինին (կառավարչին), ապա մարդասպանը դրա դիմաց պետք է վճարի 80 գրիվնա... Իշխանի գյուղական տանուտերի կամ դաշտային ավագի դիմաց պետք է վճարի 12 գրիվնա... Իսկ սպանված խոլոպի դիմաց՝ 6 գրիվնա: Իսկ եթե մեկը փախցնի ուրիշի ստրուկին կամ ստրկուհուն, ապա նա վիրավորանքի դիմաց կվճարի 12 գրիվնա: Իսկ ով հերկի ուրիշի սահմանային հողը կամ փչացնի այն, վիրավորանքի համար պիտի վճարի 12 գրիվնա: Եթե որևէ մեկը հրկիզի կալը, ապա գլխովին հանձնվում է իշխանին ամբողջ գույքով, որից հատուցվում է տիրոջ վնասը, իսկ մնացածը տնօրինում է իշխանը՝ իր կամքով: Այսպես վարվել նաև նրանց հետ, ովքեր կհրկիզեն տունը:

Հատված Բուխարայում գտնված պարսկերեն ձեռագրից, որը ուշագրավ պատմություն է IX դարի առաջին կեսի Ռուսիայի մասին:

Դա լայնարձակ երկիր է, իսկ բնակիչներն անհնազանդ են, իրենց հանդուգն են պահում, ռազմատենչ են... Այդ երկիրը բնությունից առատորեն օժտված է այն ամենով, ինչը անհրաժեշտ է: Նրանց (ռուսների) մի մասը ասպետներ են: Քուրմերը նրանցում հարգանք են վայելում, իրենց եկամուտների և առևտրի տարեկան շահույթի ինն երորդ մասը վճարում են պետությանը: Կոյաբա (Կիև) քաղաքը գտնվում է շատ հաճելի վայրում: Նա թագավորի կացավայրն է: Այնտեղ արտադրում են տարբեր մորթիներ և թանկարժեք սրեր...

Իշխան Սվյատոսլավի մասին

Արշավանքների ժամանակ նա քայլում էր թեթև և կամացուկ՝ հովազի պես... Արշավանքներում իր հետևից չէր տանում

կաթսաներով գումակ, միս չէր եփում, այլ բարակ կտրելով միսը՝ ձիու, գազանի, տավարի, և խորովելով կրակի վրա, այդպես էր ուտում: Չէր տանում նա և վրան, բայց քնում էր՝ տակը թամբատակի թաղիք փռելով և գլխի տակ թամբը դրած: Այդպիսին էին և նրա բոլոր զինվորները: Պատերազմ գնալիս նա չէր թաքցնում, այլ ասպետաբար զգուշացնում էր հակառակորդին. «Գալիս եմ ձեզ վրա»: Նա ինքն էր առաջնորդում դրուժինաները մարտի, ոգևորելով ռազմիկներին կարճ ու կրակոտ ճառով. «Չխայտառակենք ռուսական երկիրը, այլ զոհվենք: Ամուր կանգնեցեք: Ես ձեր առջևից կգնամ: Իսկ եթե իմ գլուխը ընկնի՝ կառավարեք ձեզ»: